



ՀՐՁԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹՅԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ



2025

ԿԱՌԵԽԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԵՏԵՐԻ ԳԱՐՆԱՎԱՅԻՆ  
ՎԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ ՏԱՐՐԵՐԻ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՏԱՎԱԶԱՆԵՐՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՍՊԱՍՎՈՂ ԳԱՐՆԱՍՅԻՆ ՎԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ ՁԵՎԱՎՈՐՈՂ ՀԻԴՐՈԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Գարնանային վարարումները << գետերի ջրային ռեժիմի հիմնական փուլերից է, որը ձևավորվում է ձնհալքային, անձրևային և ստորերկրյա ջրերից և ունի խառը սնում: Գարնանային վարարումների հոսքի ծավալը, առավելագույն ելքի մեծությունը, սկիզբը և ավարտը, ձևավորման ընթացքը պայմանավորված են մթնոլորտային տեղումների քանակով և բնույթով, ջերմային ռեժիմով, ձյան մեջ եղած ջրի պաշարով, ձյան կուտակման և հալքի ընթացքով, ռելիեֆի առանձնահատկություններով և այլն: Գարնանային վարարումների ընթացքում հանրապետության գետերով անցնում է տարեկան հոսքի ընդհանուր ծավալի 30-90%-ը, որի մեծությունը պայմանավորված է առանձին գետերի ջրհավաք ավազանների տեղական գործոնների ազդեցությամբ:

Գարնանային վարարումները գետերի մեծ մասում սկսվում են հիմնականում մարտի երրորդ - ապրիլի առաջին տասնօրյակներում: << գետերում տարեկան առավելագույն ելքերը դիտվում են գարնանային վարարումների ընթացքում և հաճախ գետերի ափամերձ տարածքների, բնակավայրերի, գյուղատնտեսական հողահանդակների, ենթակառուցվածքների հեղեղման պատճառ դառնում:

Գետերում գարնանային վարարումների բնութագրերը պայմանավորվում են նախաձմեռային (սեպտեմբեր-նոյեմբեր), ձմեռային (դեկտեմբեր-մարտ) ամիսների փաստացի և վարարումների ժամանակաշրջանի (ապրիլ-հունիս) կանխատեսվող հիդրոօդերևսութաբանական պայմանների առանձնահատկություններով:

Հաջորդիվ ներկայացվում է 2025 թվականի գարնանային վարարումների հոսքը պայմանավորող հիդրոօդերևսութաբանական պայմանների նկարագիրը:

## **Նախաձմեռային ժամանակաշրջանի հիդրոօդերևսութաբանական պայմաններ.**

- **սեպտեմբերին** ամսական տեղումների քանակը Լոռու, Տավուշի և Սյունիքի մարզերում կազմել է ամսական նորմայի 80-100%-ը, իսկ մնացած շրջաններում բարձր է եղել նորմայից. Գեղարքունիքի և Արարատի մարզերում կազմել է նորմայի 100-150%-ը, Շիրակի, Կոտայքի, Արագածոտնի, Արմավիրի, Վայոց ձորի մարզերում և Երևանում կազմել է նորմայի՝ 150-210%-ը (նկ.1.ա)
- **հոկտեմբերին** ամսական տեղումների քանակը Կոտայքի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերում կազմել է ամսական նորմայի 70-120%-ը, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Արագածոտնի և Արարատի մարզերում՝ 120-170%-ը, Շիրակի, Արմավիրի մարզերում և Երևանում կազմել է նորմայի 150-230%-ը (նկ.1.բ)


- նոյեմբերին հանրապետության շրջանների մեծ մասում ամսական տեղումների քանակը ցածր է եղել ամսական նորմայից՝ կազմելով հիմնականում նորմայի 50-85%-ը, միայն Սյունիքի մարզում և Երևանում եղել է նորմայի 100-110%-ի սահմաններում (նկ.1.գ):

Նախաձմեռային ժամանակահատվածի ջերմաստիճանների բաշխումն ունեցել է հետևյալ պատկերը.


- *սեպտեմբերին* օդի միջին ամսական ջերմաստիճանները ողջ հանրապետությունում բարձր են եղել նորմաներից մինչև 1.5 աստիճանով (նկ.2.ա),
- *հոկտեմբերին* օդի միջին ամսական ջերմաստիճանները հիմնականում եղել են նորմային մոտ, Տավուշի, Սյունիքի մարզերում և Երևանում նորմայից բարձր մինչև 0.5 աստիճանով (նկ.2.բ),
- *նոյեմբերին* օդի միջին ամսական ջերմաստիճանները Արմավիրի, Արարատի, Սյունիքի մարզերում և Երևանում նորմայից բարձր են եղել 0.5-1.0 աստիճանով, իսկ մնացած շրջաններում եղել են նորմայի սահմաններում (նկ.2.գ):

**Նկ. 1. Ամսական դեղումների քանակը նորմաների համեմատությամբ (%) ըստ մարզերի**  
**ա) 2024թ. սեպտեմբեր, բ) 2024թ. հոկտեմբեր գ) 2024թ. նոյեմբեր ամիսներին**


Նկ.1. ա)



Նկ.1. բ)




Նկ.1. զ)




**Նկ.2. Օդի միջին ամսական ջերմասպիճանի շեղումը նորմայից (°C)**  
**ա) 2024թ. սեպտեմբեր, բ) 2024թ. հոկտեմբեր, գ) 2024թ. նոյեմբեր ամիսներին**


Նկ.2.ա)



Նկ.2. բ)



Ակ.2. զ)



Այսպիսով, նախաձմեռային ժամանակաշրջանի հիդրոէրևութաբանական պայմանների վերլուծությունը ցույց է տրավու, որ դրանք 2025 թվականի գարնանային վարարումների հոսքի ձևավորման վրա կունենան նորմային մոդ բացասական շեղումով ազդեցություն:

### **Զմեռային ժամանակաշրջանի հիդրոէրևութաբանական պայմաններ.**

Զմեռային ժամանակաշրջանում տեղումների բաշխումն ունեցել է հետևյալ պատկերը.

- դեկտեմբերին ամսական տեղումների քանակը ողջ հանրապետությունում գգալի ցածր է եղել նորմայից. Տավուշի, Լոռու, Շիրակի և Վայոց ձորի մարզերում կազմել է նորմաների մինչև 50%-ը, իսկ մնացած մարզերում՝ 50-70%-ը (նկ.3.ա)
- հունվարին ևս ողջ հանրապետությունում տեղումների քանակը խիստ ցածր է եղել նորմաներից կազմելով նորմաների մինչև 25%-ը, Լոռու, Արմավիրի և Սյունիքի մարզերում կազմել է նորմաների 2-3%-ը (նկ.3.բ)
- փետրվարին ամսական տեղումների քանակը Շիրակի, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց ձորի մարզերում ցածր է եղել նորմաներից՝ կազմելով 50-80%, Լոռու, Գեղարքունիքի, Սյունիքի մարզերում և Երևանում կազմել է նորմաների 80-120%-ը,


իսկ Տավուշի, Արմավիրի, Արարատի մարզերում կազմել է նորմաների 120-160%-ը (նկ.3.գ)



- մարտին (մարտի 26-ի դրությամբ) տեղումների քանակը Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերում ու Երևանում ցածր է եղել նորմայից՝ կազմելով նորմայի մինչև 70%-ը, Լոռու և Տավուշի մարզերում բարձր է եղել նորմայից՝ կազմելով նորմայի 100-150%-ը, իսկ մյուս մարզերում կազմել է նորմայի 70-100%-ը (նկ.3.դ):

**Նկ.3. Ամսական գեղումների քանակը նորմաների համեմատությամբ (%) ըստ մարզերի**


**ա) 2024թ. դեկտեմբեր, բ) 2025թ.հունվար գ) 2025թ.փետրվար**

**դ) 2025թ. մարտ (26-ի դրությամբ) ամիսներին**





Նկ.3. դ)




Զմունը ամսական ջերմաստիճանների բաշխումն ունեցել է հետևյալ պատկերը.


- դեկտեմբերին օդի միջին ամսական ջերմաստիճանը Կոտայքի, Արարատի, Սյունիքի մարզերում և Երևանում բարձր է եղել նորմայից 1.5-1.8 աստիճանով, իսկ մնացած մարզերում նորմայից բարձր մինչև 1.5 աստիճանով (նկ.4.ա)
- հունվարին օդի միջին ամսական ջերմաստիճանը ամենուր բարձր է եղել նորմայից. Շիրակի, Կոտայքի և Արագածոտնի մարզերում՝ նորմայից բարձր մինչև 2.0 աստիճանով, Լոռու, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Սյունիքի մարզերում և Երևանում՝ 2.0-3.0 աստիճանով, Տավուշի, Արմավիրի և Արարատի մարզերում՝ 3.0-3.5 աստիճանով (նկ.4.բ)
- փետրվարին Շիրակի, Կոտայքի, Արմավիրի, Արարատի մարզերում և Երևանում օդի միջին ամսական ջերմաստիճանը եղել է նորմայի սահմաններում, իսկ մնացած շրջաններում նորմայից ցածր է եղել մինչև 2.0 աստիճանով (նկ.4.գ)
- մարտին (մարտի 26-ի դրությամբ) օդի միջին ամսական ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից. Լոռու, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերում՝ 2.5-3.0 աստիճանով, իսկ մնացած մարզերում և Երևանում՝ 3.0-3.5 աստիճանով (նկ.4.դ):

**Նկ. 4. Օդի միջին ամսական ջերմասպիճանի շեղումը նորմայից (°C)**  
**ա) 2024թ. դեկտեմբեր, բ) 2025թ. հունվար, գ) 2025թ. փետրվար և**  
**դ) 2025թ. մարտ (մարտի 26-ի դրությամբ) ամիսներին**


**Նկ.4. ա)**




**Նկ.4. բ)**



Նկ.4. զ)



Նկ.4. դ)



Զմեռային ժամանակաշրջանում դիրքած հիդրոէրոզութաքանական պայմանները 2025 թվականի գարնանային վարարումների հոսքի ծնավորման վրա կունենան նորմայից բացասական շեղումով ազդեցություն:


## Զնածածկույթ

ՀՀ գետերի գարնանային վարարումների հոսքի ծավալի և առավելագույն ելքի մեծությունը կախված է վարարումներին նախորդած ժամանակահատվածում կուտակված ձյան քանակից, ձնակուտակման պրոցեսի ընթացքից, ինչպես նաև վարարումների ժամանակահատվածում ջերմային և խոնավության պայմաններից:

Զյան շերտի բարձրության բաշխվածությունը հանրապետության տարածքում, ըստ բարձրության, 2024 թվականի դեկտեմբերի 25-ի, 2025 թվականի հունվարի և փետրվարի 24-ի, և մարտի 25-ի դրությամբ տրված է Նկար 5 ա - դ - ում:


2024 թվականի դեկտեմբերի 25-ի դրությամբ հանրապետության տարածքում ձյան ծածկ առկա է եղել միայն 1500-1600 մ բարձրություններից վերև առանձին շրջաններում (Նկ.5.ա) և առկա ձյան շերտի բարձրությունը ցածր է եղել 2023 թվականի նույն օրվա մեծություններից: 2024 թվականի դեկտեմբերի 25-ի դրությամբ ձյան շերտի բարձրությունը Ամասիայում կազմել է 7 սմ, Սևան լճային կայանում՝ 4 սմ, Մասրիկ, Մարտունի, Գավառ կայաններում ձյան ծածկը բացակայել է, Հրազդանում կազմել է 17 սմ, Ապարանում՝ 2 սմ, Ջերմուկում՝ 16 սմ, Ամբերդում՝ 6 սմ, Արագած թականում՝ 41 սմ: Դեկտեմբերի երրորդ տասնօրյակի ձյան շերտի միջին տասնօրյակային բարձրությունը հիմնականում բավական ցածր է եղել նորմայից կազմելով նորմայի 30-70%-ը՝ բացառությամբ առանձին կայանների (Գյումրի, Սևան, Ամբերդ) որտեղ կազմել է նորմայի 110-140%-ը:

### Նկ.5.ա) Ձյան շերտի բարձրության բաշխվածությունը, 2024թ. դեկտեմբերի 25



2025 թվականի հունվարի 24-ի դրությամբ Լոռիում, Տավուշում, Արարատյան դաշտում, Արագածոտնի, Վայոց ձորի, Սյունիքի և Կոտայքի նախալեռնային շրջաններում ձյան ծածկը բացակայել է: Հունվարի 24-ի դրությամբ ձյան շերտի բարձրությունը Ամասիայում և Գյումրիում եղել է 15-20 սմ սահմաններում, Մասրիկում, Գավառում, Մարտունիում բացակայել է, իսկ Սևան լճային կայանում կազմել է 5 սմ, Ապարանում և Հրազդանում կազմել է 29սմ, Ամբերդում և Անանուն լճում՝ 22 սմ, Զերմուկում՝ 37 սմ, իսկ Արագած թ/լ կայանում՝ 52 սմ (նկ.5.բ), մինչդեռ նախորդ տարի նույն օրը կազմել էր 118սմ: Հունվարի երրորդ տասնօրյակում ձյան շերտի բարձրության միջին տասնօրյակային բարձրությունները եղել են նորմաների 30-60%-ի սահմաններում:


#### Նկ.5.բ) Ձյան շերտի բարձրության բաշխվածությունը, 2025թ. հունվարի 24



2025 թվականի փետրվարի 24-ի դրությամբ հանրապետության ողջ տարածքում առկա է եղել ձյան ծածկ: Փետրվարի 24-ի դրությամբ ձյան շերտի բարձրությունը Դիլիջանում, Իջևանում կազմել է 19 սմ, Տաշիրում, Օծունում՝ 20-25սմ, Ստեփանավանում՝ 33 սմ, Ամասիայում և Աշոցքում՝ 32-34սմ, Սևանում՝ 16սմ, Գավառում՝ 30սմ, Մարտունիում՝ 23սմ, Շորժայում և Մասրիկում՝ 14-17սմ, Հրազդանում և Ապարանում՝ 48-60 սմ, Ամբերդում՝

69սմ, Երևանում, Արմավիրում, Արարատում և Արտաշատում՝ 7-14 սմ, Անանուն լցքում և Զերմուկում՝ 50-53 սմ, Գորիսում և Սիսիանում՝ 7-17սմ, Արագած բ/լ կայանում՝ 108 սմ (նկ.5.գ): Փետրվարի երրորդ տասնօրյակի ծյան շերտի միջին տասնօրյակային բարձրությունները Գյումրի, Ամասիա, Աշոցք, Սևան, Մասրիկ, Հրազդան, Ապարան, Զերմուկ, Ամբերդ և Արագած բ/լ օդերևութաբանական կայաններում կազմել են նորմաների 60-120%-ը, իսկ մնացած օդերևութաբանական կայաններում նորման գերազանցել են 1.5-3 անգամ:


Նկ.5.գ) Ձյան շերտի բարձրության բաշխվածությունը, 2025թ. փետրվարի 24



2025 թվականի մարտի 25-ի դրությամբ հանրապետության տարածքում ձնածածկ առկա է եղել իշխանականում 1700 մ-ից բարձր շրջաններում, բացառությամբ առանձին շրջանների, որտեղ մինչև այդ բարձրությունները առկա է եղել ձնածածկ (Ստեփանավանում՝ 17սմ, Վանաձորում՝ 9սմ, Տաշիրում՝ 7սմ) (նկ.5.դ): Մարտի 25-ի

դրությամբ Ամասիա, Սևան լճային, Մարտունի, Մասրիկ, Գավառ, Անանուն լճք, Ամբերդ և Զերմուկ օդերևութաբանական կայաններում ևս ձյան շերտը բացակայել է: Ձյան շերտի բարձրությունը Հրազդանում, Սեմյոնովկայում կազմել է 9-10 սմ, Ապարանում՝ 1 սմ, Արագած թ/լ կայանում՝ 131 սմ (համեմատության համար նշենք, որ 2024 թվականի նոյն օրը Արագած թ/լ կայանում ձյան շերտի բարձրությունը կազմել է 208 սմ): Արագած թ/լ կայանում մարտի 3-րդ տասնօրյակի ձյան շերտի միջին տասնօրյակային բարձրությունը ցածր է նորմայից և կազմում է նորմայի 76%-ը:

#### Նկ.5.դ) Ձյան շերտի բարձրության բաշխվածությունը, 2025թ. մարտի 25



Այսպիսով, գեղավազաններում կուրակված ձյան պաշարները, կախված վարարումների ժամանակահարվածի օդերևութաբանական պայմաններից, վարարումների ժամանակաշրջանում կծնավորեն նորմայից բացասական շեղումով հոսքի ծավալներ:

## **Վարարումների ժամանակաշրջանի կանխարեսվող հիդրոդերևութաբանական պայմաններ**

Ապրիլ, մայիս և հունիս ամիսներին օդի ամսական միջին ջերմաստիճանը կանխատեսվում է նորմայից բարձր 1-2 աստիճանով: Տեղումների քանակը ապրիլ և մայիս ամիսներին կանխատեսվում է նորմային մոտ, իսկ հունիսին՝ նորմայից պակաս:

Արդյունքում, վարարումների ժամանակաշրջանի կանխարեսվող հիդրոդերևութաբանական պայմանները վարարումների հոսքի ծևավորման մեջ կունենան նորմայից բացասական շեղումով ազդեցություն:

### **ԱՄՓՈՓՈՒՄ**


1. Հաշվի առնելով դիտված և կանխատեսվող հիդրոդերևութաբանական պայմանները, կանխատեսվում է, որ գետերում 2025 թվականի գարնանային վարարումների հոսքի ծավալները և առավելագույն ելքերի մեծությունները սպասվում են նորմաների 50-90%-ի սահմաններում (տես հավելվածը):

2. Գետերում ջրի առավելագույն ելքերի անցումները հիմնականում սպասվում են մայիսի առաջին և երկրորդ տասնօրյակներում:

3. Ջերմաստիճանի կտրուկ բարձրացման և հորդառատ անձրևների դեպքում գետերի մերձափնյա բնակավայրերի ու ցանքատարածությունների համար հնարավոր են ջրածածկումներ և ողողումներ, որոնց վերաբերյալ կանխատեսումներ հնարավոր է կազմել միայն 3-4 օր առաջ, երբ հստակ կանխատեսվում են մոտեցող տաք օդային ալիքներ և ինտենսիվ անձրևներ:

#### **4. Սևանա լիճ**

Հիմք ընդունելով եղանակի և Սևանա լիճ մուտք գործող գետային հոսքի կանխատեսումները, լճի մակերևույթից գոլորշացման մեծությունները, Արփա-Սևան ջրատարով Սևանա լիճ տեղափոխվելիք ջրի քանակը (միջինը 170 մլն.խոր.մ) և ոռոգման նպատակով լճից օրենքով սահմանված ջրառը՝ մինչև 170 մլն.խոր.մ (ընդ որում հաշվարկներում, որպես ջրառի սկիզբ ընդունվել է հունիսի երկրորդ տասնօրյակը), 2025 թվականի հունիսի 1-ին 2025 թվականի ապրիլի 1-ի մակարդակի համեմատ կանխատեսվում է Սևանա լճի մակարդակի բարձրացում 24-29 սմ-ով (1900.64-1900.69 մ սահմաններում), իսկ 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ լճի մակարդակը կանխատեսվում է 1900.36-1900.41 մ սահմաններում, որը 2025 թվականի հունվարի 1-ի մակարդակի համեմատ կլինի -3...+2 սմ սահմաններում (նկ.6):



**Նկ.6 Վարարումների ժամանակաշրջանում և դարվա ընթացքում Սևանա լճի մակարդակի փոփոխությունը 2012-2024թթ. ընթացքում, և կանխագրեսումը 2025 թվականի համար**

## 5. Զրամբարներ

«Հայիիդրոմետ» ՊՈԱԿ-ի կողմից դիտարկվող 5 խոշոր ջրամբարների 2025 թվականի առավելագույն ջրալցվածությունը կանխատեսվում է.

- ✓ Ախուրյանի ջրամբարում՝ 100% (525 մլն.մ<sup>3</sup>),
- ✓ Արփիլիճ ջրամբարում՝ 55-60% (58.0-63.0 մլն.մ<sup>3</sup>),
- ✓ Ապարանի ջրամբարում՝ 45-50% (40.0-45.0 մլն.մ<sup>3</sup>),
- ✓ Ազատի ջրամբարում՝ 85-90% (60.0-65.0 մլն.մ<sup>3</sup>),
- ✓ Մարմարիկի ջրամբարում՝ 95-100% (22.0-24.0 մլն.մ<sup>3</sup>):

Ուշադրություն ենք իրավիրում այն հանգամանքի վրա, որ կանխատեսումները կազմելիս հնարավորինս հաշվի են առնվել գարնանային վարարումների հոսքը ձևավորող գործոնները, և բացի այդ օգտագործվել են կանխատեսված մեծություններ, որոնք ըստ անհրաժեշտության պարբերաբար ենթակա են ճշգրտման, հետևաբար նման դեպքերում կճշգրտվեն նաև թողարկված կանխատեսումները և կտրամադրվի լրացուցիչ տեղեկատվություն:

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի

կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

ԼԵՎՈՆ ԱԶԻՀՅԱՆ

31.03.2025 թ.

2025 թ. ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՎԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ ՏԱՐՐԵՐԻ ԿԱՆԿԱՏԵՍՈՒՄ

№	ԳԵՏ, ԼԻԾ, ԶՐԱՄԲԱՐ	ԴԻՏԱԿԵՏ	ԿԱՆԿԱՏԵՍՈՒՄ	ԹՈՒՅԼԱ- ՏԵԼԻ ՄԽԱԸԸ	ԲԱՇՄԱՄՅԱ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ		
					ՆՎԱԶ.	ՄԻՋԻՆ	ԱՌԱՎ.
1	2	3	4	5	6	7	8
<b>Գարնանային վարարումների հոսքի ծավալները (01.04-30.06) մլն խոր.մ</b>							
1	Փամբակ	Շիրակամուր	31.0	11.4	7.52	44.5	87.4
2	Փամբակ	Վանաձոր	90.0	23.5	44.9	102	209
3	Փամբակ	Մեղրուց	105	28.8	52.8	146	275
4	Փամբակ	Թումանյան	133	35.8	64.9	190	313
5	Դեբեղ	Թումանյան	315	98.6	169	449	731
6	Դեբեղ	Այրալա	370	111	204	532	854
7	Դեբեղ	Այրում	430	118	178	573	947
8	Լեռնացուր	Լեռնապար	21.0	6.17	11.4	27.0	55.4
9	Տանձուց	Վանաձոր	35.0	9.60	11.0	42.3	77.6
10	Այրերս	Դեբեղ	20.0	5.85	10.6	30.6	58.6
11	Ջորագեղը	Կաթնառավ	41.0	7.65	27.3	47.4	72.7
12	Ջորագեղը	Սրեմիանավան	125	35.0	71.8	195	324
13	Ջորագեղը	Գարգառ	185	44.6	87.3	245	438
14	Տաշիր	Սարագովկա	37.0	13.1	14.7	46.9	91.0
15	Գարգառ	Կուրքան	15.0	5.29	4.61	23.1	42.4
16	Մարցիգեղը	Թումանյան	30.0	10.5	10.3	46.6	98.9
17	Աղստված	Ֆիդեկովոց	17.0	4.26	6.98	21.1	50.5
18	Աղստված	Դիլիջան	41.0	13.6	16.2	56.4	148
19	Աղստված	Իջևան	155	44.6	44.2	183	405
20	Բլյանգեղը	Դիլիջան	11.0	3.53	3.74	15.1	26.0
21	Շամլուդ	Դիլիջան	7.00	2.64	3.09	9.22	22.6
22	Գեղիկ	Գոշ	47.0	17.1	14.4	70.1	157
23	Գեղիկ	Ճամբարակ	10.0	4.03	3.47	15.7	30.6
24	Պաղուղ	Գեղահովիկ	20.0	9.90	3.42	33.3	60.9
25	Ուկեպար	Ուկեպար	15.0	8.46	2.70	22.6	55.4
26	Կիրանց	Աճարկուց	15.0	5.24	1.40	18.5	36.7
27	Հախում	Ծաղկավան	20.0	6.27	4.89	26.7	45.2
28	Տավուշ	Բերդ	9.00	5.08	1.55	13.3	34.2
29	Հախինջա	Այգեձոր	22.0	15.1	9.40	55.0	104
30	Նալիգեղը	Գանձարար	6.50	3.46	2.27	12.0	23.5
31	Ախուրյան	Ամասիա	47.0	25.5	35.3	89.6	193
32	Ախուրյան	Ախուրյիկ	47.0	23.4	40.1	91.0	181
33	Ջորագեղը	Ջորակերպ	2.00	1.41	1.75	5.68	16.3
34	Աշոցք	Կրասար	30.0	6.36	23.6	42.9	70.1
35	Կարկաչան	Ղարիքանյան	5.00	3.56	3.38	12.1	23.6
36	Քասախ	Վարդենիս	15.0	11.2	5.68	25.8	66.8
37	Քասախ	Աշղարակ	22.0	12.4	11.5	37.4	106
38	Թթուցուր	Թթուցուր	10.0	5.74	3.10	17.9	32.1
39	Եղիպատրուց	Եղիպատրուց	2.20	1.17	1.45	4.04	9.50
40*	Գեղարուր	Արագած	12.0	4.18	6.70	22.3	36.2
41	Շաղվարդ	Փարբի	3.00	1.50	2.55	5.60	14.2
42	Ամբերդ	Ազարակ	7.50	4.00	0.30	8.78	29.6
43	Հրազդան	Հրազդան	110	37.1	57.0	166	320
44	Հրազդան	Արգել	36.0	16.0	27.1	54.6	108
45	Հրազդան	Երևան	75.0	42.0	27.0	116	234
46	Մարմարիկ	Հանրավան	30.0	8.80	9.53	39.1	68.6
47	Մարմարիկ	Աղավնաձոր	85.0	27.3	34.0	114	284
48	Ծաղկամարդ	Արդավագ	17.0	4.68	7.44	21.0	36.2
49	Գոմուր	Մեղրաձոր	28.0	11.6	10.9	39.6	97.6
50	Դալար	Արգարան	14.0	6.00	5.42	19.3	44.5
51	Արագեղը	Արագուտ	6.50	4.45	1.00	7.60	32.5
52	Ազար	Գառնի	60.0	16.0	36.3	77.2	155

1	2	3	4	5	6	7	8
53	Վեղի	Ուրցաձոր	25.0	10.8	12.8	40.4	76.0
54	Արփա	Զերմոնկ	57.0	16.4	46.2	97.4	166
55	Արփա	Եղեգնաձոր	100	51.7	27.0	145	352
56	Արփա	Արենի	170	90.2	51.0	250	612
57	Վայր	Զաղիթակի	4.80	2.87	1.96	10.0	21.3
58	Գյաձոր	Վերնաշեն	2.10	1.18	0.35	3.32	8.97
59	Եղեգիս	Հերմոն	63.0	20.6	19.0	78.9	178
60	Եղեգիս	Շալին	90.0	36.2	34.4	118	255
61	Արդարուն	Արդարունք	9.00	4.11	3.93	15.3	29.9
62	Սելիմազես	Շալին	17.0	10.9	5.84	33.4	86.2
63**	Մեղրիգետ	Լիճը	9.70	2.58	8.10	15.5	25.5
64	Մեղրիգետ	Մեղրի	37.0	19.1	18.3	56.5	115
65	Ողջի	Քաջարան	42.0	10.1	27.9	62.3	102
66	Ողջի	Կապան	130	44.4	41.0	196	384
67	Որորան	Գորար	40.0	15.3	28.9	63.7	113
68	Շղոնկ	Շղոնկ	19.0	11.4	15.8	36.7	88.4
69	Գորիսգետ	Գորիս	3.00	2.00	1.99	4.69	12.4
70	Գեղի	Գեղի	50.0	15.1	35.9	80.9	134

\* պրված է ապրիլ-օգոստոս ամիսների հոսքի կանխադեսումը և բնութագրերը

\*\* պրված է ապրիլ-հուլիս ամիսների հոսքի կանխադեսումը և բնութագրերը

Աևանա լիճ թափանող գետեր							
71	Ձկնագետ	Ծովագյուղ	15.0	6.67	8.10	26.2	54.3
72	Դրախնիկի	Դրախնիկի	2.30	1.35	0.32	4.05	8.72
73	Փամբակ	Փամբակ	2.30	1.20	1.29	3.84	10.1
74	Մասրիկ	Ծովակ	30.0	6.31	17.8	37.2	70.9
75	Կարճադրյուր	Կարճադրյուր	9.00	2.88	2.81	11.0	23.2
76	Արծվանիսս	Արծվանիսս	4.30	2.63	1.20	5.70	18.0
77	Վարդենիս	Վարդենիկ	29.0	7.03	17.9	33.6	55.4
78	Մարգունի	Գեղեղովիկ	27.0	7.31	16.3	32.4	64.5
79	Արգիճի	Վերին Գեղաշեն	85.0	27.3	54.3	122	291
80	Շաղկաշեն	Վաղաշեն	23.0	5.66	15.7	31.6	48.4
81	Բախմակ	Ծակրար	10.0	4.81	1.16	16.2	32.9
82	Շողվակ	Զորագյուղ	7.30	2.70	3.35	9.23	19.9
83	Գավառագետ	Նորապուս	32.0	6.00	25.0	41.8	73.0

Առավելագույն ելքերի մեծությունները. մ³/վրկ							
1	Փամբակ	Շիրակամուր	17.0	5.90	5.50	19.5	45.6
2	Փամբակ	Վանաձոր	26.0	10.2	13.2	33.8	83.5
3	Փամբակ	Մեղրուր	47.0	14.0	16.2	52.9	109
4	Փամբակ	Թումանյան	53.0	21.6	25.6	79.1	171
5	Դեբեդ	Թումանյան	210	51.3	66.0	203	477
6	Դեբեդ	Ախրայ	295	55.2	71.5	257	760
7	Դեբեդ	Այրում	280	80.0	50.6	245	884
8	Լեռնաջուր	Լեռնապար	8.00	2.52	3.90	9.90	24.3
9	Տանձուր	Վանաձոր	17.0	5.02	3.20	19.3	65.6
10	Այրերս	Դեբեդ	19.0	11.5	2.30	21.1	80.9
11	Զորագետ	Կաթնառապ	20.0	6.63	9.60	22.3	52.4
12	Զորագետ	Սկրեփանավան	75.0	31.0	32.7	92.9	249
13	Զորագետ	Գարգառ	95.0	43.7	23.1	125	417
14	Տաշիր	Սարապովկա	27.0	18.0	4.70	33.0	125
15	Գարգառ	Կողթան	11.0	7.77	3.90	13.9	76.0
16	Մարցիգետ	Թումանյան	23.0	10.4	4.30	30.3	93.0
17	Աղսու	Ֆիդեկովու	7.00	3.90	1.60	9.50	26.1
18	Աղսու	Դիլջան	17.0	6.59	4.90	24.4	53.1
19	Աղսու	Իջևան	61.0	21.2	16.6	75.6	182
20	Բլյանգետ	Դիլջան	6.00	2.40	1.48	8.14	16.2
21	Շամլու	Դիլջան	3.00	1.30	0.98	4.31	10.5
22	Գեղիկ	Գոյ	25.0	12.0	5.20	35.9	74.5
23	Գեղիկ	Ճամբարակ	7.00	4.25	2.10	10.4	32.4

1	2	3	4	5	6	7	8
24	Պաղուր	Գեղահովիր	16.0	11.1	1.50	29.9	83.8
25	Ուկեպար	Ուկեպար	13.0	7.30	1.80	19.7	45.8
26	Կիրանց	Աճարկուր	7.00	3.85	1.50	10.9	29.1
27	Հախում	Ծաղկավան	13.0	5.81	2.90	16.6	44.3
28	Տակուշ	Բերդ	7.00	5.56	1.60	11.2	35.4
29	Հախինջա	Ազեծոր	25.0	13.1	3.10	38.4	89.0
30	Նալպիգեն	Գանձաքար	5.00	3.67	1.10	7.50	24.8
31	Ախուրյան	Ամասիա	23.0	7.99	11.0	30.4	58.0
32	Ախուրյան	Ախուրիկ	37.0	21.9	15.8	60.7	182
33	Քասախ	Վարդենիս	11.0	16.6	2.90	23.2	151
34	Քասախ	Աշուարակ	35.0	19.0	7.20	50.6	130
35	Հրազդան	Հրազդան	40.0	20.6	16.5	62.8	144
36	Հրազդան	Արգել	17.0	11.0	5.60	27.7	82.1
37	Հրազդան	Երևան	45.0	30.4	22.0	59.0	174
38	Մարմարիկ	Հանքավան	13.0	3.88	3.40	16.5	33.4
39	Մարմարիկ	Աղավնաձոր	30.0	12.4	10.0	40.0	86.7
40	Գոմուր	Մեղրաձոր	13.0	5.40	2.40	15.4	50.6
41	Ազար	Գառնի	23.0	11.2	11.8	32.5	83.9
42	Վեղի	Ուրցաձոր	9.00	5.91	5.50	17.0	45.9
43	Արփա	Ջերմուկ	25.0	11.2	18.4	49.4	91.0
44	Արփա	Եղեգնաձոր	60.0	21.0	26.5	65.6	119
45	Արփա	Արենի	100	37.0	31.6	111	199
46	Եղեգիս	Հերմոն	23.0	7.40	10.1	27.5	48.6
47	Եղեգիս	Շապին	30.0	14.7	17.8	47.6	207
48	Արդարուն	Արդարունք	4.50	2.00	1.28	6.14	16.9
49	Մելիմագեն	Շապին	13.0	7.58	1.60	15.9	72.4
50	Մեղրիգեն	Լիճը	3.00	0.81	1.61	4.14	7.35
51	Մեղրիգեն	Մեղրի	15.0	8.33	5.40	17.5	87.5
52	Ողջի	Քաջարան	13.0	4.22	8.70	18.3	43.9
53	Ողջի	Կապան	45.0	15.4	11.4	55.9	133
54	Ծղուկ	Ծղուկ	13.0	6.12	5.50	15.0	39.0
55	Գեղի	Գեղի	17.0	5.47	9.00	24.0	44.0

Սևանա լիճ թափվող գեղեր						
56	Ձկնագեն	Ծովագյուղ	10.0	4.27	3.38	14.0
57	Դրախմիկ	Դրախմիկ	3.00	1.00	0.32	4.05
58	Փամբակ	Փամբակ	1.30	0.70	0.40	1.53
59	Մասրիկ	Ծովակ	8.00	2.80	2.91	9.73
60	Կարճաղբյուր	Կարճաղբյուր	2.30	0.90	0.55	2.80
61	Արծվանիս	Արծվանիս	2.60	1.00	0.86	3.12
62	Վարդենիս	Վարդենիկ	12.0	3.64	2.42	13.2
63	Մարտունի	Գեղովիր	11.0	3.43	5.80	13.6
64	Արգիճի	Վերին Գեղաշեն	43.0	25.3	16.3	50.7
65	Ծաղկաշեն	Վաղաշեն	7.00	2.16	4.70	9.98
66	Բախմակ	Ծակար	8.50	3.91	0.26	12.1
67	Շողվակ	Ջորագյուղ	3.50	1.50	1.22	4.86
68	Գավառագեն	Նորավորս	13.0	6.52	5.64	16.6

**Վեգեդացիոն ժամանակաշրջանի (01.04-30.09) միջին ելքերի մեծությունների  
կանխադեսում, մ³/վրկ**

1	2	3	4	5	6	7	8
1	Փամբակ	Շիրակամուր	2.60	0.88	1.54	3.42	6.86
2	Փամբակ	Վանաձոր	6.50	1.78	4.38	8.19	16.0
3	Փամբակ	Մեղրուր	8.00	2.19	4.43	11.7	20.8
4	Փամբակ	Թումանյան	11.0	1.92	5.80	16.1	27.0
5	Դեբեղ	Ախրայ	31.0	9.30	20.7	45.6	80.4
6	Դեբեղ	Այրում	35.0	10.4	17.7	47.9	92.2
7	Լեռնացուր	Լեռնապար	1.70	0.40	0.98	2.17	5.27
8	Ալարեր	Դեբեղ	1.60	0.60	1.16	2.60	5.47
9	Զորագետ	Կաթնառապ	3.00	0.70	2.51	4.20	7.02
10	Զորագետ	Սկրիանավան	11.0	3.00	7.10	17.0	30.3
11	Զորագետ	Գարգառ	15.0	4.36	8.90	21.8	38.4
12	Տաշիր	Սարապովկա	3.20	1.10	1.57	4.09	9.10
13	Գարգառ	Կուրքան	1.20	0.43	0.70	1.91	3.69
14	Մարցիգետ	Թումանյան	2.50	0.97	1.03	3.95	7.25
15	Աղսկր	Ֆիղեկուր	1.50	0.38	0.72	1.81	3.68
16	Աղսկր	Դիլիջան	3.20	1.09	1.41	4.67	10.9
17	Աղսկր	Իջևան	11.0	3.40	3.70	14.7	34.0
18	Գեղիկ	Գոշ	2.50	1.38	1.20	5.53	13.2
19	Պաղծոց	Գեղահովիր	1.50	0.86	0.40	2.96	6.12
20	Ուկեպար	Ուկեպար	1.00	0.61	0.31	1.81	4.86
21	Կիրանց	Աճարկուր	1.10	0.46	0.14	1.56	2.99
22	Հախում	Ծաղկավան	1.50	0.57	0.49	2.20	4.71
23	Տավուշ	Բերդ	0.70	0.48	0.16	1.08	3.88
24	Հայինջա	Ազենդոր	2.00	1.28	0.84	4.53	10.2
25	Ախուրյան	Ախուրիկ	4.00	2.02	4.50	8.50	16.5
26	Քասախ	Վարդենիս	1.00	0.82	0.41	1.89	4.86
27	Քասախ	Աշուարակ	2.00	1.27	1.40	4.00	11.1
28	Հրազդան	Հրազդան	7.80	2.65	5.31	12.1	23.2
29	Հրազդան	Արգել	3.50	1.02	3.08	5.09	8.81
30	Մարմարիկ	Հանքավան	2.40	0.56	0.93	2.90	5.35
31	Մարմարիկ	Աղավնաձոր	6.60	2.27	4.20	8.19	19.5
32	Դալար	Աղջան	1.00	0.43	0.38	1.39	3.55
33	Ազար	Գառնի	4.70	1.30	2.99	6.43	10.8
34	Վեդի	Ուրցաձոր	1.50	0.75	0.38	2.38	5.43
35	Արփա	Ջերմուկ	5.00	1.25	3.90	8.03	13.5
36	Արփա	Եղեգնաձոր	10.0	3.65	2.69	14.7	36.0
37	Արփա	Արենի	15.0	5.71	4.07	20.3	42.9
38	Վայր	Ջանիթափ	0.35	0.19	0.15	0.68	1.46
39	Գյանձոր	Վերնաշեն	0.15	0.088	0.033	0.22	0.63
40	Եղեգիս	Հերմոն	4.70	1.51	2.10	6.43	13.0
41	Եղեգիս	Շաղին	8.50	2.63	2.90	10.7	19.6
42	Արդարուն	Արդարունը	0.70	0.32	0.32	1.19	2.47
43	Սելիմագետ	Շաղին	1.20	0.70	0.47	2.41	5.79
44	Մեղրիգետ	Լիճը	0.70	0.19	0.53	1.11	1.76
45	Մեղրիգետ	Մեղրի	2.80	1.21	1.39	4.64	9.58
46	Ողջի	Քաջարան	3.10	1.16	2.20	5.90	9.08
47	Ողջի	Կապան	11.0	3.84	3.17	18.4	32.1
48	Գեղի	Գեղի	4.30	1.59	3.16	7.18	10.8
49	Որորան	Գորայր	3.50	0.99	2.93	5.60	9.06
50	Ծղուկ	Ծղուկ	1.35	0.79	1.03	2.28	4.74
<b>Աևանալիճ թափվող գեղեր</b>							
51	Զկնագետ	Ծովագուր	1.00	0.60	0.60	1.83	3.70
52	Դրախտիկ	Դրախտիկ	0.16	0.10	0.030	0.29	0.61
53	Փամբակ	Փամբակ	0.20	0.14	0.12	0.33	0.73
54	Մարիկ	Ծովակ	3.10	0.48	2.12	3.74	5.99

1	2	3	4	5	6	7	8
55	Կարճադրուր	Կարճադրուր	0.80	0.22	0.41	1.07	1.99
56	Արծվանիստ	Արծվանիստ	0.35	0.17	0.10	0.41	1.24
57	Վարդենիս	Վարդենիկ	2.10	0.60	0.61	2.47	5.20
58	Մարդունի	Գեղիովիկ	2.00	0.65	1.29	2.67	5.58
59	Արգիճի	Վերին Գեղաշեն	6.50	1.89	4.10	8.56	19.9
60	Ծաղկաշեն	Վաղաշեն	1.50	0.44	1.10	2.32	3.54
61	Բախուակ	Ծակար	0.80	0.33	0.12	1.09	2.24
62	Շողվակ	Զորագյուղ	0.50	0.18	0.25	0.66	1.32
63	Գավառագետ	Նորակուս	3.00	0.48	2.95	3.94	6.61

### ԶՐԵՐԻ ՄՈՒՏՔԸ ԶՐԱՄԲԱՐՆԵՐ ԵՎ ԼՃԵՐ՝ ԳԵՏԵՐՈՎ

1	2	3	4	5	6	7	8
(01.04-30.06) մլն. իոր.մ							
1	Սևանա լիճ		295	68.2	209	410	676
2	Արփի լճի ջրմբ.		33.0	9.57	32.6	63.0	109
3	Ախուրյանի ջրմբ.		235	118	191	492	971
4	Ապարանի ջրմբ.		30.0	16.0	25.0	57.0	133
5	Ազարի ջրմբ.		67.0	18.4	36.9	87.0	161
6	Կեչուրի ջրմբ		81.0	25.2	73.5	149	258
7	Սպանդարյանի ջրմբ.		78.0	25.0	60.0	130	210
8	Զողագի ջրմբ.		55.0	24.7	7.70	77.8	157
9	Գեղիի ջրմբ.		63.0	23.9	51.7	119	227
10	Հախումի ջրմբ		23.0	7.85	6.12	32.6	56.5
11	Տավուշի ջրմբ		10.0	5.46	1.71	13.7	37.5

(01.04-30.09) մ³/վրկ							
1	2	3	4	5	6	7	8
1	Սևանա լիճ		25.0	5.10	18.3	34.0	54.2
2	Ախուրյանի ջրմբ.		25.0	8.56	17.4	39.8	78.0
3	Ապարանի ջրմբ.		2.60	1.18	1.35	4.44	8.18

Տնօրենի տեղակալ՝

Էդգար Միսակյան

Հիդրոլոգիայի ծառայության պետ՝

Ամայա Միսակյան

Հիդրոլոգիական  
կանխատեսումների բաժնի պետ՝

Լուսինե Շաքարյան

Թողարկել է 31.03.2025թ.